ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2022 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 4 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-47-ԵՊԲՀ»

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների և բժշկական գործիքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-47-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 10-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 11-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Հարգելի գնահատող հանձնաժողով Խնդրում եմ պարզաբանել հետևյալ հարցերը 1. Ինչու է հրավերի թիվ 25, 26, 27, 28 և 29 չափաբաժինների տեխնիկական բնութագրերը գրված այնպես, որ դրանց համապատասխանի միայն Ջոնսոն և Ջոնսոն ընկերության արտադրանքը: Բնութագրերում նշված շեղման միջակայքերը առաջին հայացքից տպավորություն են ստեղծում, որ հնարավորություն է տրվում այլ արտադրողների ևս մասնակցելու, սակայն բնութագրերի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ չափաբաժինների բնութագրերը ուղղորդված են և խտրական, քանի որ դրանց համապատասխանում է ընդամենը մեկ արտադրող, ինչը հակասում է ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված Կարգի 22-րդ կետով սահմանված հետևյալ պահանջին. <<22. Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:>>: 2. Որպես կոնկրետ օրինակ բեջբերում ենք բազմաթիվ խտրական և ուղղորդող պահանջներից մեկը թիվ 25 չափաբաժնի մասով՝ այն է <<Բրանշերի առբերման ներքին մակերեսի վրա առկա են ռետինե ներդիրներ, ինչպես նաև ձեռքի ակտիվացման կոճակների և ռոտացիոն օղակի վրա, որի շնորհիվ կանխվում է սահումը և դառնում է հարմարավետ բժշկի աշխատանքը:>> : Որպես ապացույց կարող եք ուսումնասիրել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» գնանշման ընթացակարգի թիվ 18 չափաբաժինը և մեր ընկերության կողմից ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/50 բողոքի վերաբերյալ կայացված որոշումը, որի համաձայն այդ բնութագիրը համարվել է խտրական և ուղղորդող: Փաստացի Ձեր կազմակերպությունը անտեսում է բողոք քննող անձի կայացված որոշումը նույն արտադրողի մոդելի նույն մոդելի ապրանքատեսակի վերաբերյալ և սահմանում խտրական ու ուղղորդող բնութագիր:

Պարզաբանում N 1: Հրավերի թիվ 25-29 չափաբաժինների համար սահմանված են ապրանքներ, որոնք նախատեսված և համատեղելի են «Ջոնսոն և Ջոնսոն» կազմակերպության արտադրության՝ համալսարանում առկա և շահագործվող համապատասխան սարքավորման հետ: Բացի այդ ս.թ հոկտեմբերի 13-ին փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 526-ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգում, որը ուժի մեջ է մտել ս.թ նոյեմբերի 02-ից: Համաձայն փոփոխված կարգի 22-րդ կետի՝ «Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով և նույն կարգի 21-

րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությամբ նախատեսված՝ պատվիրատուի ղեկավարի հետ համաձայնեցված դեպքերում կատարվող գնումների»:
Հրավերի փոփոխված տարբերակը հրապարակվել է ս.թ նոյեմբերի 04-ին, ուստի դրա նկատմամբ կիրառելի են փոփոխված կարգի դրույթները:
Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-47-ԵՊԲՀ» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Լիլիթ Մկրտչյանին:

Հեռախոս՝ 010 301000 (438)

Էլեկտրանային փոստ՝ marketing.ysmu9@gmail.com:

ԷԱՃԱՊՁԲ-2022/16-47-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լ. Դանիելյան

Անդամներ՝ _____ Ա.Հակոբյան

_____ Հ. Սարգսյան

Объявление
о разъяснении приглашения

Настоящий текст заявления утвержден решением оценочной комиссии № 4 от **11 Ноября 2022 года** и опубликован в соответствии со статьей 29 закона РА «О закупках»

Код процедуры: «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-47-ԵՊԲՀ»

Оценочная комиссия по процедуре закупки под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-47-ԵՊԲՀ», организованная с целью приобретения товаров и аксессуаров медицинского назначения для нужд фонда «Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци», ниже представляет поставленный вопрос о приглашении с тем же кодом, полученный 10 Ноября 2022г. и разъяснение по этому вопросу, представленный 11 Ноября 2022г.:

Вопрос N 1: Уважаемая оценочная комиссия прошу прояснить следующие вопросы: 1. Почему технические характеристики лотов номер № 25, 26, 27, 28 и 29 приглашения написаны таким образом, чтобы их соответствовала только продукция компании «Джонсон и Джонсон»? Указанные в характеристиках диапазоны отклонений на первый взгляд создают впечатление, что предоставляется возможность участвовать и другим производителям, однако тщательное изучение характеристик показывает, что характеристики этих доз направлены и дискриминационны, поскольку им соответствует только один производитель, что противоречит следующему требованию пункта 22 установленного порядком, утвержденным решением 526-Н правительства РА от 04 мая 2017г.: «22. При определении характеристик предмета закупки следует учитывать, что их должно удовлетворять более одного возможного участника и производителя, за исключением случаев совершения закупки по основанию, предусмотренному подпунктом 4 пункта 23 настоящего Порядка.» 2. В качестве конкретного примера мы приводим одно из многих дискриминационных и направленных требований по части лота номер 25: «на внутренней поверхности для извлечения скоб есть резиновые вставки, а также на ручных кнопках активации и поворотном кольце, благодаря чему предотвращается скольжение и становится комфортной работа врача.». В качестве доказательства вы можете изучить лот номер 18 процедуры котировки под кодом «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/30» и представленное нашей компанией решение по жалобе ԳԲՔԱ-Լ0-2022/50, согласно которому эта характеристика была признана дискриминационной и направляющей. Фактически, ваша организация игнорирует принятое решение лица, рассматривающее жалобу, о товаре той же модели того же производителя и устанавливает дискриминационную и направляющую характеристику.

Разъяснение N 1: Для лотов номер № 25-29 приглашения установлены продукты, предназначенные и совместимые с соответствующим оборудованием, имеющимся и эксплуатируемым в университете производства организации «Джонсон и Джонсон». Кроме того, с 13 -го Октября было внесено изменение в порядок организации процесса закупок, утвержденный Постановлением Правительства РА 526-Н, который вступил в силу со 02-го Ноября. Согласно пункту 22 измененного порядка «при определении характеристик предмета закупки необходимо учитывать, что их должно удовлетворять более одного возможного участника, за исключением закупок, осуществляемых в случаях, согласованных с руководителем заказчика, по основанию, предусмотренному подпунктом 4 пункта 23 настоящего Порядка и абзацем «г» подпункта 1 пункта 21 того же порядка».
Измененная версия приглашения была опубликована 04-го Ноября данного года, поэтому к нему применимы положения измененного порядка.

Для получения дополнительной информации, связанной с этим объявлением, вы можете обратиться к Лилит Мкртчян- секретарь оценочной комиссии по коду «ԷԱՃԱՊՁԲ-2022/16-47-ԵՊԲՀ»

Номер телефона: 010 301000 (438)
Адрес электронной почты: marketing.ysmu9@gmail.com:
Оценочная комиссия по процедуре закупки под кодом ԷԱՃԱՊՁԲ-2022/16-47-ԵՊԲՀ

Председатель комиссии: _____ Л. Даниелян

Члены комиссии: _____ А. Акобян

_____ Г. Саргсян